Կարգապահական գործ ԿԳ-14070

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 21-ի թիվ 13-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ԿԳ/12-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Կարապետ Աղաջանյանի,Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Սարդարյանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Անահիտ Սաղաթելյանին (արտոնագիր 656) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենի ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ուղղված 02.06.2014թ. թվագրված դիմումը՝ փաստաբան Անահիտ Սաղաթելյանի կողմից՝

ա) հոնորարի իրական չափը վստահորդից թաքցնելու վերաբերյալ,

բ) դիմողի սեփականության իրավունքի իրացմանը խոչընդոտելու վերաբերյալ,

գ) դիմողի պարտապաններից և վարձակալներից ստացված գումարները վերջինիս չհանձնելու վերաբերյալ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.06.2014թ. թիվ 218-Ա/ԿԳ-14070 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Անահիտ Սաղաթելյանի նկատմամբ՝ Կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 3.3.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 04.07.2014թ. հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Համլետ Ստեփանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.

3.1. Դիմողի բացատրությունները.

2012թ. ապրիլ ամսին ծանոթանալով փաստաբան Անահիտ Սաղաթելյանի հետ՝ փոխառության պայմանագրերից բխող գումարի բռնագանձման մի քանի հայցերով իր շահերը ներկայացնելու նպատակով՝ Դիմողը և փաստաբան Անահիտ Սաղաթելյանը 2012թ.

ապրիլ ամսին կնքել են իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի գինը կազմել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որն էլ պայմանագիրը կնքվելուց անմիջապես հետո Դիմողի կողմից վճարվել է, ինչի դիմաց Անահիտ Սաղաթելյանն իր պարտականությունները կատարել է:

Այնուհետև՝ փաստացի 14.10.2012թ., սակայն թվագրված՝ 15.09.2012թ., վերջիններիս միջև կնքվել է՝ իրավաբանական ծառայությունների մատուցման ևս մեկ պայմանագիր, որի միայն երկրորդ էջն է ինքը ստորագրել, իսկ առաջին էջը Դիմողի պնդմամբ փաստաբանն իրեն ցույց չի տվել, որտեղ էլ նշված է եղել հետևյալը. *«Իրավաբանական ծառայությունների իրականացման համար Պատվիրատուն պարտավորվում է Փաստաբանին վճարել շահած գումարի 10%-ի չափով ՀՀ դրամ՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո կայացվող վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:»:* Դիմողը նշել է նաև, որ երկրորդ պայմանագիրը կնքելիս իրենց միջև վճարի մասին նույնիսկ որևէ խոսակցություն չի եղել, պայմանագրի բովանդակությունն իրեն չի բացատրվել, իսկ պայմանագրի երկրորդ օրինակն իրեն չի տվել: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ մատուցվելիք իրավաբանական ծառայությունների դիմաց Դիմողը թույլատրել էր Անահիտ Սաղաթելյանին անվճար բնակվել իրեն պատկանող ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող տանը՝ 3 (երեք) ամիս ժամկետով:

Փաստաբան Անահիտ Սաղաթելյանը շուրջ 20 (քսան) ամիս շարունակ անընդմեջ բնակվել է վերը նշված հասցեում անհատույց, այսինքն՝ առանց վարձավճար վճարելու, և միայն 2014թ. հունիս ամսին է ազատել այն՝ չկատարելով մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները, ավելին՝ բնակարանից վերցնելով որոշակի իրեր և չի վերադարձնում:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Անահիտ Սաղաթելյանն իր պարտատերերից ստացել է մոտ 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլար գումար, որն իրեն մինչ օրս չի վերադարձրել:

3.2. Պատասխանողի բացատրությունները.

Ըստ Պատասխանողի՝ իր և Դիմողի միջև 15.09.2012թ. կնքվել են իրավաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ թվով 3 (երեք) պայմանագրեր, որոնց ձևն ու բովանդակությունը համապատասխանում է Կանոնագրքի 3.3.1 ենթակետով սահմանված կանոններին: Պայմանագրերը կազմվել են երկուական օրինակից, որոնցից մեկը ստորագրման օրը՝ 15.09.2012թ., հանձնվել է Դիմողին:

Դիմողին ի սկզբանե հայտնի են եղել հոնորարի չափն ու վճարման կարգը: Վերջինս տեղյակ է եղել նաև պայմանագրերից բխող մնացյալ իր պարտավորությունների մասին, այն է՝ կնքված պայմանագրերի կատարման հետ կապված, ինչպես նաև դատական ծախսերի, որոնք չէին մտնում հոնորարի գումարի մեջ:

Դիմողի պնդումն այն մասին, թե պայմանագրերի ստորագրման ժամանակ փաստաբանի կողմից ցույց չեն տրվել հոնորարի իրական չափը, թե եղել է այլ պայմանավորվածություն և այլն, իրականությանը չեն համապատասխանում, քանի որ նախ պայմանագրի մեկ օրինակը ստորագրման պահին հանձնվել է Դիմողին, բացի այդ, Դիմողի խնդրանքով 2013թ. հոկտեմբեր ամսին իր էլեկտրոնային հասցեից պայմանագրից քաղվածք էր ուղարկել Դիմողին, որի վերաբերյալ որևէ առարկություն կամ պահանջ վերջինիս կողմից չի ներկայացվել:

Կնքված պայմանագրերով Դիմողը դեռևս չի մարել իր վճարային պարտավորությունների մի մասը, որի մասին Պատասխանողը գրավոր ծանուցել է՝ խնդրելով կատարել վճարումները:

Դիմողի թույլտվությամբ ու համաձայնությամբ 3 (երեք) ամիս ժամկետով (2014թ. ապրիլ ամսից) զբաղեցրած բնակարանը ազատվել է պայմանավորված ժամկետում՝ 2014թ. հունիսի վերջերին և թեկուզ մեկ օրով չի խախտվել բանավոր պայմանավորվածությունը:

Դիմողի բնակարանից որոշակի իրեր վերցնելու հանգամանքը ևս չի համապատասխանում իրականությանը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Երևանի, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող տան դիմացի բնակիչներ Աշոտ Հարությունյանը և Ջեմմա Հովհաննիսյանը տվել են ցուցմունքներ առ այն, որ. *«2012թ. հոկտեմբերի 15-ին Արթուր Գոհենը գնաց Ֆրանսիա, գնալուց հետո մեկ ամիս անց մենք նկատեցինք, որ Անահիտ Սաղաթելյանը մեկ-նեկ գալիս էր Արթուր Գոհենի տուն, գիշերը տան լույսը վառվում էր, հավանաբար մնում էր այդտեղ: Այնուհետև 1-2 ամիս հետո եկան մեկ որդու ընտանիքը, որոշ ժամանակ անց եկավ երկրորդ որդին՝ իր ընտանիքի հետ: Եվ բնակվեցին մինչև 2014թ. հունիսի վերջ: Համոզված ենք, որ մնացել են այդտեղ, քանի որ նրա որդիների մեքենաները մշտապես կանգնած էին մեր պատուհանի մոտ:»*,

Երևանի, Գագարինի փողոց թիվ 68/36 հասցեում բնակվող Հայկանուշ Մելքոնյանը հայտարարել է, որ հաստատում է վերոհիշյալ հարևանների ցուցմունքները:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը

Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Համլետ Ստեփանյանը հավաքագրել է տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրել գործում առկա ապացույցները, որի արդյունքներով 2014 թվականի օգոստոսի 20-ին կազմել և պալատի խորհրդին է հանձնել եզրակացություն, ըստ որի.

«Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում՝

Ա) Հաշվի առնելով Դիմողի՝ 15.09.2012թ. պայմանագիրը առանց վերապահումների ստորագրելը, դրա 14-րդ կետում՝ այն «երկու օրինակից ստորագրված, որոնցից մեկը հանձնվում է Պատվիրատուին, իսկ մյուսը՝ պահվում է Փաստաբանի մոտ» պայմանը ամրագրված լինելը, գտնում եմ, որ փաստաբան Անահիտ Սաղաթելյանը չի կատարել վարույթի հարուցման որոշման մեջ նշված Վարքագծի կանոնագրքի 3.3.1 կետով նախատեսված արարքը, վստահորդին ամբողջությամբ բացահայտել է հոնորարի չափը,

Բ) Բնակվելով վստահորդի բնակարանում, ազատելով այն միայն վերջինիս՝ ՀՀ փաստաբանների պալատ դիմելուց հետո, Դիմողի պնդմամբ՝ վերջին երկու ամսվա վարձավճարը չվճարելու, որոշ իրեր վերցնելու պարագայում, փաստաբան Անահիտ Սաղաթելյանը կատարել է վարույթի հարուցման որոշման մեջ նշված Վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3 կետերով նախատեսված արարքը. կասկածի տակ է դրել փաստաբանի հեղինակությունն ու ազնվությունը, իր վարքագծով չի նպաստել փաստաբանության հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Խորհրդի նիստը նշանակվել է 2014 թվականի հոկտեմբերի 24-ին ժամը 19:00-ին, որը սակայն հետաձգվել է:

Այնուհետև՝ 2015 թվականի հունվարի 21-ին, ժամը՝ 18.30-ին, տեղի է ունեցել խորհրդի նիստը ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) փաստաբան Անահիտ Սաղաթելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 09.11.2006թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 21.01.2015թ. տրամադրված տեղեկանքով):

2) փաստաբան Անահիտ Սաղաթելյանը կնքված թվով 3 (երեք) իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի հիմքով Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենին մատուցել է իրավաբանական ծառայություններ՝ դատարաններում ներկայացնելով վերջինիս շահերը թիվ ԵԷԴ/1514/02/12, ԵԷԴ/1515/02/12, ԵՄԴ/0916/02/12, ԵԿԴ/2910/02/12, ԵՇԴ/1288/02/12 քաղաքացիական գործերի շրջանակներում, ինչը հաստատվում է կարգապահական գործի վարույթում առկա նշված քաղաքացիական գործերով վճիռների պատճեններով, մասնավորապես թիվ ԵԷԴ/1515/02/12 քաղաքացիական գործով 04.09.2013թ. վճռի, թիվ ԵԿԴ/2910/02/12 քաղաքացիական գործով 25.04.2013թ. վճռի և թիվ ԵՇԴ/1288/02/12 քաղաքացիական գործով 21.03.2013թ. վճռի պատճեններով, ինչպես նաև թիվ ԵԷԴ/1514/02/12 և ԵՄԴ/0916/02/12 քաղաքացիական գործերով datalex.am պաշտոնական կայքէջում կատարված գրառումներով և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը փաստաբան Անահիտ Սաղաթելյանի կողմից ներկայացված 15.12.2012թ. դիմումի պատճենով:

3) փաստաբան Անահիտ Սաղաթելյանը շուրջ 20 (քսան) ամիս շարունակ անընդմեջ բնակվել է ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող Դիմողին պատկանող տանը անհատույց, այսինքն՝ առանց վարձավճար վճարելու, և միայն 2014թ. հունիս ամսին է ազատել այն՝ չկատարելով մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները: Դրա մասին են վկայում ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող տան դիմացի բնակիչներ Աշոտ Հարությունյանի և Ջեմմա Հովհաննիսյանի ցուցմունքներն առ այն, որ. *«2012թ. հոկտեմբերի 15-ին Արթուր Գոհենը գնաց Ֆրանսիա, գնալուց հետո մեկ ամիս անց մենք նկատեցինք, որ Անահիտ Սաղաթելյանը մեկ-նեկ գալիս էր Արթուր Գոհենի տուն, գիշերը տան լույսը վառվում էր, հավանաբար մնում էր այդտեղ: Այնուհետև 1-2 ամիս հետո եկան մեկ որդու ընտանիքը, որոշ ժամանակ անց եկավ երկրորդ որդին՝ իր ընտանիքի հետ: Եվ բնակվեցին մինչև 2014թ. հունիսի վերջ: Համոզված ենք, որ մնացել են այդտեղ, քանի որ նրա որդիների մեքենաները մշտապես կանգնած էին մեր պատուհանի մոտ:»*, ինչպես նաև ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 68/36 հասցեում բնակվող Հայկանուշ Մելքոնյանի հայտարարությունը, որով հաստատել է վերոհիշյալ հարևանների ցուցմունքները: Իսկ այն, որ Անահիտ Սաղաթելյանը ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող Դիմողին պատկանող տանը բնակվել է անհատույց չի հերքում նաև ինքը Պատասխանողը: Միաժամանակ կարգապահական վարույթի նյութերում առկա են Դիմողի էլեկտրոնային փոստից տպված՝ վերջինիս և Պատասխանողի միջև նամակագրության պատճեններ, որոնցից հստակ երևում է, որ դեռևս 29.01.2014թ. Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենը պահանջել է ազատել իրեն պատկանող տունը և հանձնել դրա բանալիները իր կողմից լիազորված անձին՝ վճարելով մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները, ինչը Անահիտ Սաղաթելյանի կողմից պատշաճ և ժամանակին չի կատարվել, և Դիմողի գույքն ազատել է միայն հունիս ամսվա վերջին:

4) 15.09.2012թ. կնքված թվով 2 (երկու) իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի առաջին էջերում, որտեղ 8-րդ կետով ձեռագրով ամրագրված է փաստաբանի ծառայության գումարը, այն է՝ *շահած գումարի 10%-ի չափով*, և երկրորդ էջերում առկա տեքստերի տառատեսակը ակնհայտ տարբերվում է: Առաջին էջում տեքստի տառատեսակը Arial Armenian է, իսկ երկրորդ էջինը՝ Sylfaen (Unicode): Բացի այդ այդպիսիք որևէ կերպ միացված(ամրակցված չեն) մեկը մյուսին:

<u>6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 21.01.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Անահիտ Սաղաթելյանի (արտոնագիր 656, ստացված՝ 09.11.2006թ.) նկատմամբ 2006 - 2014թթ. ընկած ժամանակահատվածում 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ.

- 29.08.2008թ. Անահիտ Սաղաթելյանի նկատմամբ սանկցիայի հիման վրա հարուցված կարգապահական վարույթը Պալատի խորհրդի 24.10.2008թ. թիվ 20/5 որոշմամբ կարճվել է,
- Անդամավճարի պարտք ունենալու մասով 22.03.2011թ. հարուցվել է վարույթ, որը 27.08.2007թ. Խորհրդի թիվ 10/3 որոշմամբ կարճվել է (արտոնություն է կիրառվել),
- Անդամավճարի պարտք ունենալու մասով 15.10.2011թ. հարուցվել է վարույթ, որը 30.11.2011թ. Խորհրդի թիվ 27/7 որոշմամբ կարճվել է (արտոնություն է կիրառվել),
- 13.09.2013թ. Անահիտ Սաղաթելյանի նկատմամբ սանկցիայի հիման վրա հարուցված կարգապահական վարույթը Պալատի խորհրդի 05.12.2013թ. թիվ 44ԿԳ/1-Ա որոշմամբ կարճվել է,
- 14.10.2013թ. Անահիտ Սաղաթելյանի նկատմամբ սանկցիայի հիման վրա հարուցված թիվ 13022 կարգապահական վարույթը Պալատի խորհրդի 28.02.2014թ. թիվ 20ԿԳ/1-Ա որոշմամբ կարճվել է,
- 18.11.2013թ. Անահիտ Սաղաթելյանի նկատմամբ ՀՊԳ ղեկավարի գրության հիման վրա Պալատի նախագահի թիվ 52-Ա/ԿԳ-13029 որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Պալատի խորհրդի 07.03.2014թ. թիվ 21ԿԳ/1-Ա որոշմամբ նա՝ 2012թ. ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2., 3.1.3., 3.8.4. կետերի, 3.8.5. կետի 1-ին ենթակետի պահանջները խախտելու համար ենթարկվել է տույժի նկատողության ձևով: Տույժը համարվում է մարված:

<u>7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Անահիտ Սաղաթելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

ա) 15.09.2012թ. կնքված թվով 2 (երկու) իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի ուսումնասիրությունից ակնառու է դառնում, որ այդ պայմանագրերի առաջին էջերում, որտեղ 8-րդ կետով ձեռագրով ամրագրված է փաստաբանի ծառայության գումարը, այն է՝ *շահած գումարի 10%-ի չափով*, և երկրորդ էջերում առկա տեքստերի տառատեսակներն ակնհայտ տարբերվում են, բացի այդ այդպիսիք որևէ կերպ միացված(ամրակցված չեն) մեկը մյուսին, ինչից հնարավոր չէ եզրակացնել, որ այդ երկուական էջերը նույն պայմանագրին են վերաբերել, այսինքն՝ որ ներկայացված պայմանագրերի առաջին էջերն ի սկզբանե եղել են նույն պայմանագրերի երկրորդ էջերի անբաժանելի մասերը, որպիսի հանգամանքները կասկածի տեղիք են տալիս ներկայացված պայմանագրերի իրականությանը համապատասխանելիության հանգամանքի առումով: Ավելին, Ըստ Անահիտ Սաղաթելյանի տրված բացատրության իրականում պետք է կնքվեր թվով 3 (երեք) պայմանագիր, սակայն քանի որ իր ձեռքի տակ՝ իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի չլրացված օրինակներ(պատճե) չեն եղել կնքվել է ընդամենը երկուսը: Այս հանգամանքից արդեն իսկ կարելի է եզրակացնել, որ Դիմող՝ Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենին՝ պայմանագրերի հասանելիք իր օրինակները չեն տրվել:

Վերոգրյալ փաստական հանգամանքների հիմքով Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ չի ապացուցվել այն հանգամանքը, որ կնքված պայմանագրերի հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ փաստաբան Անահիտ Սաղաթելյանը և Դիմող՝ Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենը համաձայնության են եկել, ավելին, որ կարգապահական վարույթում առկա՝ վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրերում փաստաբան Անահիտ Սաղաթելյանը նախատեսել է հոնորարի չափը և վճարման կարգը, հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու

չափորոշիչները, ինչը հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.3.1. կետին, ըստ որի՝ *վարձատրությունը (հոնորարը), որը փաստաբանական գրասենյակը ստանում է, պետք է ամբողջապես բացահայտվի վստահորդին: Հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ համաձայնության են գալիս կողմերը՝ իրենց հայեցողությամբ:.....*

Միևնույն կանոնագրքի 3.1.4. կետի համաձայն՝ *վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրում պետք է նախատեսվի՝ հոնորարի չափը և վճարման կարգը, հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու չափորոշիչները:*

Փաստորեն, չի հաստատվել այն հանգամանքը, որ փաստաբան Անահիտ Սաղաթելյանի կողմից ներկայացված պայմանագրերը նախապես բացահայտված, այսինքն՝ որ դրանք ամբողջական տեսքով համաձայնեցված են եղել իր վստահորդի՝ Դիմող՝ Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենի հետ, որպիսի հանգամանքը հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոններին, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, ըստ որի՝ *փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով*:

Իսկ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

բ) Փաստաբան Անահիտ Սաղաթելյանը շուրջ 20 (քսան) ամիս շարունակ անընդմեջ բնակվել է ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող Դիմողին պատկանող տանը անհատույց, այսինքն՝ առանց վարձավճար վճարելու, և միայն 2014թ. հունիս ամսին է ազատել այն՝ չկատարելով մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները: Դրա մասին են վկայում ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող տան դիմացի բնակիչներ Աշոտ Հարությունյանի և Ջեմմա Հովհաննիսյանի ցուցմունքներն առ այն, որ. *«2012թ. հոկտեմբերի 15-ին Արթուր Գոհենը գնաց Ֆրանսիա, գնալուց հետո մեկ ամիս անց մենք նկատեցինք, որ Անահիտ Սաղաթելյանը մեկ-նեկ գալիս էր Արթուր Գոհենի տուն, գիշերը տան լույսը վառվում էր, հավանաբար մնում էր այդտեղ: Այնուհետև 1-2 ամիս հետո եկան մեկ որդու ընտանիքը, որոշ ժամանակ անց եկավ երկրորդ որդին՝ իր ընտանիքի հետ: Եվ բնակվեցին մինչև 2014թ. հունիսի վերջ: Համոզված ենք, որ մնացել են այդտեղ, քանի որ նրա որդիների մեքենաները մշտապես կանգնած էին մեր պատուհանի մոտ:»*, ինչպես նաև ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 68/36 հասցեում բնակվող Հայկանուշ Մելքոնյանի հայտարարությունը, որով հաստատել է վերոհիշյալ հարևանների ցուցմունքները: Իսկ այն, որ Անահիտ Սաղաթելյանը ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող Դիմողին պատկանող տանը բնակվել է անհատույց չի հերքում նաև ինքը Պատասխանողը: Միաժամանակ կարգապահական վարույթի նյութերում առկա են Դիմողի էլեկտրոնային փոստից տպված՝ վերջինիս և Պատասխանողի միջև նամակագրության պատճեններ, որոնցից հստակ երևում է, որ դեռևս 29.01.2014թ. Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենը պահանջել է ազատել իրեն պատկանող տունը և հանձնել դրա բանալիները իր կողմից լիազորված անձին, իսկ հետագայում նաև խնդրել է կատարել մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները, ինչը Անահիտ Սաղաթելյանի կողմից պատշաճ, այսինքն՝ ժամանակին չի կատարվել, և Դիմողի գույքն ազատվել է միայն հունիս ամսվա վերջին:

Պալատի խորհուրդը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Անահիտ Սաղաթելյանն, ունենալով պայմանավորվածություն Ժան Ժակ Մարի Արթուր Գոհենի հետ՝ վերջինիս պատկանող ք.Երևան, Գագարինի փողոց թիվ 110 հասցեում գտնվող անշարժ գույքը 3(երեք) ամիս ժամկետով անհատույց զբաղեցնելու մասով, զբաղեցրել է այն շուրջ 20(քսան) ամիս՝ հաշվի չառնելով նույնիսկ սեփականատիրոջ սկսած 29.01.2014թ.

ներկայացվող պահանջներն՝ ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող տունը և հանձնել դրա բանալիներն իր կողմից լիազորված անձին՝ վճարելով մայիս-հունիս ամիսների կոմունալ վճարումները:

Փաստորեն շուրջ 5 (հինգ) ամիս Պատասխանողը, հանդիսանալով բարձր իրավագիտակցություն ունեցող անձ՝ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, և խախտելով ՀՀ Օրենսդրությամբ սահմանված պահանջները, սկսել է ապօրինի տիրապետել ուրիշի, տվյալ դեպքում իր վստահորդի ժան ժակ Մարի Արթուր Գոհենին սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անտեսելով այն ազատելու սեփականատիրոջ օրինական պահանջները:

Փաստաբանի նման վարքագծի դրսևորումը հասարակության մեջ թյուր կարծիք է ստեղծում թե իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և թե այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 կետերի համաձայն՝ *փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):*

Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Անահիտ Սաղաթելյանին (արտոնագիր 656) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.2.2. և 2.2.3. և 3.3.1 կետերի պահանջների խախտման համար:
2. Փաստաբան Անահիտ Սաղաթելյանի (արտոնագիր 656) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ Դէոնթոլոգիա թեմայով 8(ութ) ակադեմիական ժամով տևողությամբ:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Անահիտ Սաղաթելյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան